# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ

_____20

N _____

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր 06.11.2019թ. թիվ 343-72 և 343-73 գրությունների՝ տեղեկացնում եմ, որ «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենսդրությամբ նախատեսված դեպքում գրասենյակն ընդգրկվում է պետական մարմնի կառուցվածքում: Բացի այդ, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Անվտանգության խորհրդի գրասենյակի կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատելու մասին» թիվ 752-Լ որոշման հավելված 1-ի 2-րդ կետի համաձայն՝ ԱԽ գրասենյակը գործում է ՀՀ վարչապետի աշխատակազմի կառուցվածքում:

Համաձայն վկայակոչած նորմերի՝ Անվտանգության խորհրդի գրասենյակը ՀՀ վարչապետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է, հետևաբար չունի առանձնացված «Հարցումների էլեկտրոնային հարթակ» և գործերի կառավարչություն: Այսպիսով՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի աշխատողների նյութատեխնիկական սպասարկումը, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների ծառայությունների ապահովումն իրականացվում է ՀՀ վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության կողմից (https://www.gov.am/am/staff-structure/info/84/), իսկ «Հարցումների էլեկտրոնային հարթակ»-ի սպասարկումը՝ իրականացվում է ՀՀ վարչապետի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի հատուկ համակարգերի բաժնի կողմից (https://www.gov.am/am/staff-structure/info/92/):

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

0019, Հայաստանի Հանրապետություն, Երևան, Մ. Բաղրամյան պ. 24, հեռ. (+374 10) 590 201